«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	*Ներառական կրթության համակարգում հիպերակտիվ երեխաների հետ տարվող աշխատանքի կազմակերպումը և ֆինանսական կառավարման առանձնահատկությունները ուսումնական հաստատություններում*
ԱՌԱՐԿԱ՝	*Պատմություն*
ՀԵՂԻՆԱԿ՝	*Հակոբյան Հերմինե*
ՄԱՐԶ՝	*Լոռի*
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝	*Վանաձորի թիվ 10 ավագ դպրոց*
ՂԵԿԱՎԱՐ՝	*Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր Ա. Ծատուրյան*

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն□□□

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը մի համակարգ է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի վրա։ Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային ու համայնքային կյանքին։

Այն ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության, մոտեցումների, կառույցների և մեթոդական համակարգի մեջ, տարածվում է համապատասխան տարիքային խմբերի բոլոր երեխաների վրա։

Ներառական կրթությունը ելնում է այն համոզմունքից, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է։

Ներառումը լրացնում է հատուկ կրթությանը։ Հատուկ կրթությունը զարգացել է առանձին փուլերով, որոնց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամ երեխաների և ուսման դժվարություններ ունեցող սովորողների կարիքների բավարարման տարբեր ուղիներ։ Որոշ դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությանը, սակայն իրականացվել է մեկուսացված։

Վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգերի նպատակահարմարությունը ինպպես մարդու իրավունքների սահմանափակման, այնպես էլ կրթության որակի ապահովման տեսանկյունից։

Ներառական կրթության հանդեպ արդի մոտեցումը տարբերվում է նախկինում ընդունված այն տեսակետից, որ հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտները առանձին էին կրթություն ստանում և ուսուցումն իրականացվում էր առանձին դասասենյակներում, նույնիսկ առանձին դպրոցներում։ Մարդիկ ընդունել էին և արդեն հարմարվել են այն մտքին, որ հատուկ կրթություն նշանակում է առանձին կրթություն։

Ներկայումս կիրառվող մեթոդներն ու ծրագրերը ի վիճակի չեն բավարարելու մեկուսացված երեխաների ու դեռահասների կրթական կարիքները։ Անցյալում այդ

նպատակով դիմում էին հատուկ ծրագրերի, հաստատությունների և մասնագետ մանկավարժների օգնությանը: Լավագույն նկատառումներով իրականացվող նման տարբերակման հետևանքը հաճախ լինում է երեխայի (դեռահասի) մեկուսացումը:

Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից:

Ուստի, որևէ տեսակի հաշմանդամություն չի կարող արգելք լինել մարդու՝ կրթություն ստանալու իրավունքի համար:

Առանձնացված հատուկ դպրոցներում երեխաներին ուսուցանելը հակասում է տան, ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Չնայած հատուկ դպրոցների կրթական ծառայությունների որոշ առավելություններին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների բաժանումը ընտանիքից ու տնից վկայում է այնպիսի մարդկանց նկատմամբ հասարակության մեջ գոյություն ունեցող նախապաշարմունքների մասին [1]: Ներառական կրթությունը ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, և հանրակրթական համակարգը պետք է հարմարվի բոլոր սովորողների (զարգացման հապաղումներով, առանձնահատուկ կարիքներով) անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ է զինել ուսուցման գործընթացի ճկունությամբ:

Որոշ ուսուցիչներ կարծում են, թե (ԿԱՊԿՈՒ) երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ (ԿԱՊԿՈՒ) երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենն անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը

- ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման ընթացքին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների կիրառում,

- նպաստում է բոլոր սովորողների ակտիվության և կրթության որակի բարձրացմանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը հանրակրթական դպրոցներ կմղի ուսուցիչներին կիրառելու նոր՝ անձնակենտրոն ուսուցման մեթոդներ՝ ապահովելով մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսուցման գործընթացում:

Ինչ խոսք, ի լրումն այս ամենի՝ անհրաժեշտություն կառաջանա հատուկ տեխնիկական օժանդակության և երեխայի զարգացման կոնկրետ խանգարումներով պայմանավորված՝ հատուկ սարքավորումների ու տեխնիկական միջոցների ներդրման: Այս գործունեության դրական արդյունք կարող է դառնալ դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները [6]:

ԿԱՊԿՈՒ երեխաներ

Այժմ անդրադառնանք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին: ԿԱՊԿՈՒ են համարվում ֆիզիկական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներ, որոնք չեն կարողանում արտահայտել իրենց ցանկությունները և կարրիքները և ուսուցման հետ խնդիրներ ունեն: Որպես աշակերտներ՝ նրանք պահանջում են ավելի համբերատար և նուրբ վերաբերմունք: Սովորաբար նրանց կրթության հարցով զբաղվում են հոգեբաններ, ընդհանուր և հատուկ կրթության դպրոցի ուսուցիչներ և իհարկե, հոգատար ծնողները: Կիրառվող մեթոդները կախված են տվյալ աշակերտի մոտ առկա խնդիրներից:

Որոշ երեխաներ դասապրոցեսի ընթացքում անընդմեջ ինտենսիվ հրահանգների կարիք են զգում այնպիսի ընդունակություններ ձեռք բերելու համար, որոնք սովորական երեխաներին հեշտ են տրվում:

Ներառական կրթությունը տեղի է ունենում, երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաները և մյուս բոլոր աշակերտները միասին են սովորում մի դասարանում:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ երբ այդպիսի երեխան դասերի է հաճախում նորմալ զարգացում ունեցող հասակակիցների հետ, դրական ակադեմիական և հասարակական փոփոխություններ են տեղի ունենում բոլոր երեխաների մոտ:

Ուսուցումը ներառական դպրոցներում հնարավորություն է ընձեռում երեխաներին ձեռք բերելու անձնական կենսափորձի վրա հիմնված գիտելիքներ մարդու իրավունքների մասին (թեպետ դա նրանց հատուկ չի դասավանդվում), ինչը հանգեցնում է խտրական դրսևորումների նվազեցմանը, քանի որ երեխաները սովորում են ճիշտ հարաբերվել իրար հետ, ճանաչել և ընդունել միմյանց տարբերությունները:

Կրթության մեջ ներառումը ենթադրում է՝

1. Բոլոր սովորողների կրթական կարիքների հավասար գնահատում
2. Ուսումնական, մշակութային, համայնքային միջոցառումներին սովորողների ներգրավվածության աստիչանի բարձրացում

3. Դպրոցների վարած քաղաքականության վերակառուցում և դրա համապատասխանեցում սովորողների բազմազանությանը և առանձնահատկություններին
4. Ուսուցման գործընթացում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր սովորողների ներգրավում (չսահմանափակվելով միայն հաշմանդամ և կրթական հատուկ պահանջներ ունեցող սովորողներով)
5. Խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռքբերում, որը կոչված է ապահովելու որոշակի սովորողների մասնակցությունն ուսումնական գործընթացին՝ սովորողների համար ավելի մեծ բարեփոխումների ակնկալիքով
6. Սովորողների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում
7. Սեփական համայնքում կրթություն ստանալու սովորողների իրավունքի ապահովում

Այսպիսով, ***ներառական կրթությունը***՝

1. Ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել
2. Ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն

Այստեղ կանգ առնելով՝ պետք է նշել, որ հաշմանդամությունն ու աղքատությունը սերտորեն փոխկապակցված են։

Նկատվում է, որ աղքատ երեխան առավել պասիվ է, դժվար է նրանից ակնկալել ակտիվ միջամտություն կամ աջակցություն հասարակական որևէ գործընթացի։ Հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքների համար ավելի մեծ է աղքատության եզրին հայտնվելու վտանգը (տարբեր պատճառներով՝ տեղաշարժման, աշխատանքի երեխայի խնամքի հետ կապված խնդիրների և այլն)։

Որքան աղքատ է ընտանիքը, այնքան մեծ է հասարակությունից նրա անդամների մեկուսացման վտանգը: Այս պարագայում կրթությունը կարող է տգալ գործնական հմտություններ և գիտելիքներ՝ աղքատությունը և դրանից բխող արտասովոր երևույթները հաղթահարելու համար: Հատուկ կարիքներով, ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաներին ու մեծահասակներին ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դիմակալելու նախապաշարումներին, օգնում նրանց դուրս գալու ստվերից, սեփական տեսակետն արտահայտելիս լինելու ավելի ինքնավստահ, կառուցելու սեփական ապագան առանց այլոց օժանդակության և դառնալու հասարակության լիիրավ անդամ:

3. Նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը
4. Նպաստում է ներառական հասարակության կառուցման հեռահար ռազմավարական գաղափարի իրականացմանը
5. Դինամիկ և զարգացող գործընթաց է: Այն ենթադրում է բազմազանություններին արձագանքելու այնպիսի արդյունավետ ձևերի որոնում, որոնք հնարավորություն կտան անընդհատ դիտարկումների և վերլուծությունների միջոցով ճիշտ գնահատելու սովորողների կարիքները՝ ստեղծված իրավիճակներում կողմնորոշվելու և համարժեք քայլեր ձեռնարկելու համար [6]:

Հիպերակտիվություն

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներ հասկացությունը իր մեջ ներառում է նաև հիպերակտիվ և (ՈՒՊԱՀ) «Ուշադրության պակասի ախտանիշ» հիպերակտիվությամբ երեխաներ:

Դիտարկենք հիպերակտիվ և (ՈՒՊԱՀ) երեխաների հետ տարվող աշխատանքի առանձնահատկությունները:

Հիպերակտիվությունը ավանդական տերմինաբանության մեջ հաճախ օգտագործվում է այն երեխաների նկատմամբ, որոնց հուզական դաշտը և վարքագիծը շեղվում են նորմալից:

Դա հիվանդություն չէ, այլ նյարդային վարքագծի դրսևորման մի տեսակ, որն արտահայտվում է մյուսներին հրելով, կռվի մեջ մտնելով և մեծերին անհանգստացնելով: Այսպիսի երեխաները անդադար խոսում են՝ չլսելով մյուսներին և առանց պատճառի կարող են թողնել հեռանալ:

Նրանք ընդունակ են կատարել հապճեպ որոշումներ, բայց չեն կենտրոնանում խնդրի մի տրված լուծման վրա: Սպասում են արդյունքի առանց աշխատելու ո՛չ ֆիզիկապես, ո՛չ մտավոր:

Նրանք անդադար շարժման մեջ են, անհանգիստ և հուզականորեն ոչ կայուն: Սահմանափակումն եր չեն ընդունում: Ընդդիմանում են կարգ ու կանոնին [3]:

Հոգեբաններն ասում են, որ հիպերակտիվ երեխաների պահվածքը ավելի շուտ կապված է նյարդային համակարգի խանգարման հետ, ինչն էլ կարող է պայմանավորվախ լինել գլխուղեղի գործունեության յուրահատկություններով, ծննդաբերական վնասվածքներով, ինֆեկցիոն հիվանդություններով, ժառանգական առանձնահատկությամբ:

Հիպերակտիվությունը կենտրոնական նյարդային համակարգի աննշան օրգանական փոփոխությունների արտահայտումն է, որի հիման վրա նկատվում են տարբեր նյարդային հակազդեցություններ, վարքագծի, ինչպես նաև խոսելու խանգարումներ:

Հիպերակտիվությունը ավելի հաճախ է հանդիպում տղաների, քան թե աղջիկների մոտ:

Մեծ Բրիտանիայում 25 տղաներից մեկը կարող է լինել այդպիսին, իսկ 100 աղջիկներից՝ ընդամենը 1-ը: Երեխաները սովորաբար ախտորոշվում են 3-7 տարեկանում, բայց ախտանշանները շարունակվում են նաև մեծ հասակում: Բուժումը պետք է սկսել հնարավորինս շուտ [2]:

(ՈՒՊԱՀ) «Ուշադրության պակասի ախտանիշ» հիպերակտիվություն

(ՈՒՊԱՀ)-ի հետ են կապում վարքագծի խանգարումները և նախադպրոցական և դպրոցական տարիքում ուսման մեջ դժվարությունները, շրջապատողների հետ

փոխհարաբերությունների խնդիրները։ ՈՒՊԱՀ-ի հիմնական դրսևորումների մեջ են մտնում ուշադրության փոփոխությունները (նրա պակասը, իմպուլսիվության և հիպերակտիվության ախտանիշները)։

Եթե հիպերակտիվության ախտանիծշները երեխայի մեծանալուն զուգընթաց վերանում են, ապա ցրվածությունն ու իմպուլսիվությունը կարող են ուղեկցել մարդուն երկար տարիներ՝ հիմք ծառայելով նևրոզի և սոցիալական անհարմարվածության համար։

Վարքագծային ախտանշանների մի շարք կա, որն ասոցիացվում է ՈՒՊԱՀ երեխաների հետ։ Այնպիսի վարքագծերը, ինչպես, օրինակ ուսուցչին նայելը, ուսումնական գործընթացին հետևելը, ընդհանուր և անհատական գործունեության մեջ ընդգրկվելը, հարցեր և ճիշտ համարժեք պատասխաններ տալը համարվում են դասասենյակում ուշադրության համար անհրաժեշտ գործոններ։

Սա կանոն է համարվում, երբ գործածում ենք ուշադիր և ակտիվ աշակերտ տերմինը։

Այդպիսի վարքագծից որոշ շեղումներ նկատելի են նաև այն երեխաների մոտ, որոնք չունեն ուշադրության պակասի ախտանիշ։

Դա խնդիր կարող է դառնալ միայն, եթե այդ ախտանշանները ներգործում են երեխայի հասարակական և դպրոցական կյանքին։

Հիպերակտիվ երեխաների ներառական կրթությամբ զբաղվող մասնագետները պետք է կիրառեն հետևյալ սկզբունքները՝

1. Թիմային աշխատանք

ՈՒՊԱՀ երեխայի հետ աշխատելիս՝ ընդհանուր և հատուկ կրթության դպրոցի ուսուցիչները մշակում են ԱՈՒՊ (անհատական ուսուցման պլան)։

Թիմային աշխատանքի սկզբում պետք է լավ ուսումնասիրել հիպերակտիվ աշակերտի հիվանդության պատմությունը, նրա վարքագծային ախտանշանները և դիտարկման նպատակները տանը և դպրոցում։

Անուշադրության ախտանշաններ	Հիպերակտիվ ախտանշաններ	Իմպուլսիվ ախտանշաններ
Դպրոցական աշխատանքներում կատարված անուշադրության սխալներ	Անհանգստություն	Ընդհատում է մյուսներին
Չի լսում կամ չի հետևում հրահանգներին	Վազում կամ մագլցում է այնտեղ, որտեղ չի կարելի կամ երբ ուզենա	Անընդունակ է սպասելու իր հերթին
Չի ավարտում ոչ մի բան-հեշտությամբ շեղվում է	Անընդունակ է նստելու կամ հանգիստ խաղալու	Պատասխանում է հարցերին մինչև դրանք լրիվ կհնչեն
Կորցնում և մոռանում է իրերը	Անդադար խոսում է	

Թիմային աշխատանքը ենթադրում է ընդհանուր և հատուկ կրթության դպրոցի ուսուցիչների, ծնողի և երեխայի պլանավորված աշխատանք։

Դա ուսուցման մի ամբողջական պլան է, որը պահանջում է հատուկ մասնագետի ուշադրություն ակադեմիական և հասարակական հմտությունների նկատմամբ և՛ դպրոցում, և՛ ընտանիքում։

Առաջին փուլը առանձին զրույցն է երեխայի հետ՝ նրա, այսպես կոչված, սխալ վարքագծի պատճառները իմանալու համար։ Շատ կարևոր է դեպի նրա սիրտը տանող ճանապարհ հարթելու ունակությունը, կարեկցանքը նրա հանդեպ, բայց ոչ թե խղճահարությունը։ Նա չպետք է զգա, որ ուսուցիչը խղճում է իրեն կամ տարբերություն է դնում իր և նորմալ զարգացում ունեցող մեկ այլ աշակերտի միջև։

Երկրորդ փուլը հիպերակտիվ երեխայի ծնողների ընդգրկումն է։ Հաճախ մասնագետ ուսուցիչը տուն է այցելում, զրուցում հիպերակտիվ երեխայի ծնողների հետ և սովորեցնում նրանց ճիշտ խնամելու և դաստիարակելու հմտությունները։ Այդ զրույցների ժամանակ ծնողները կիսվում են իրենց մտքերով, զգացմունքներով երեխայի վարքագծի վերաբերյալ, այն դժվարությունների ու սահմանափակումների մասին, որոնք նա ունի։

Երեխայի ներկայությունը պարտադիր է, որպեսզի նա իմանա իր հիվանդության բուժմանը ուղղված ծնողների և մասնագետների բոլոր քայլերի մասին։

Եվ վերջապես, վերջին փուլում իր աշխատանքային օրվա պլանի կազմակերպումը դպրոցում և տանը։

Ամբողջ աշխատանքը վերահսկվում է ընդհանուր և հատուկ կրթության դպրոցի ուսուցիչների կողմից։

Գործնական աշխատանք

Ֆիլմի դիտում՝ Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքում

Տարիքային խումբը՝ 13+

Համապատասխան թեմաները՝ «Հաշմանդամություն ունեցող անձինք», «Հանդուրժողականություն»։

Նպատակը՝ իմանալ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները։ Հասկանալ, որ հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես հասարակության լիարժեք անդամներ են։

Ժամանակ՝ 45 րոպե։

Անհրաժեշտ պարագաներ՝ թուղթ ու գրիչ, գրատախտակ։

Ընթացք

Նախքան ֆիլմի ցուցադրումը աշակերտներին հանձնարարել թուղթը բաժանել 2 մասի Մեկի վրա գրել իրենց ուժեղ կողմերը, մյուսի վրա թույլ կողմերը (անհատական աշխատանք)։ Նրանք կարող են չներկայացնել գրածը, քանի որ խիստ անձնական է։

Այնուհետև ցուցադրել «Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից» ֆիլմը։ Որից հետո աշակերտներին հանձնարարել նույն առաջադրանքը կատարել Լարիի համար (թուղթը բաժանել 2 մասի, և մի մասում գրել Լարիի թույլ, իսկ մյուս մասում ուժեղ կողմերը)։

Անհատական աշխատանքից հետո, աշակերտները թվարկում են Լարիի ուժեղ կողմերը և գրի առնում դրանք գրատախտակին, այնուհետև թվարկում և գրի են առնում Լարիի թույլ կողմերը։

Աշակերտներին հարցնել, արդյոք Լարիի ուժեղ և թույլ կողմերից որոշները համապատասխանում են իրենց թույլ և ուժեղ կողմերի հետ։ Ցանկացողները ներկայացնում են իրենց թույլ և ուժեղ կողմերը և համեմատականներ տանում Լարիի հետ։

Աշակերտներին բացատրել, որ Լարին էլ ունի ուժեղ և թույլ կողմեր, ինչպես մեզանից յուրաքանչյուրը։

Կշռադատում

Կշռադատումը տեղի է ունենում քննարկման միջոցով։ Աշակերտներին հարցնել՝ դուք ձեր շրջապատում ճանաչու՞մ եք նման մարդու։ Իսկ նրանց հանդեպ նման հոգատարություն նկատե՞լ եք մեր հասարակության մեջ։ Եթե ոչ, ապա ինչու՞։ Ինչպե՞ս կբացատրեք, որ մարդը՝ ով դրամի կարիք ունի գումար է հավաքում ուրիշներին օգնելու նպատակով։

Ձեր համայնքում հնարավո՞ր համարում եք համայնքի նման հոգատարություն կարիքավոր մարդկանց հանդեպ։ Եթե ոչ, ապա ինչու՞։

Իսկ դուք կարո՞ղ եք այդ հոգատար մարդկանցից մեկը լինել՝ յուրաքանչյուրդ հիշեք, թե ինչ եք արել կարիքավոր մարդկանց հոգատարություն ցուցաբերելու նպատակով (գումար հավաքել և տրամադրել, հասարակական գործունեություն ծառայել, օգնություն ցուցաբերել և այլն)։

Շեշտադրել այն փաստը, որ Լարին լինելով հաշմանդամ, ցանկանում էր հասարակության լիարժեք ներկայացուցիչ զգալ իրեն և օգնել կարիքավոր մարդկանց [9]։

2. Աշխատանք դպրոցում

Պարզե՛ք, թե ուշադրության պակասով /հիպերակտիվ/ աշակերտը որտեղ է դժվարանում։

Որոշ երեխաներ դժվարանում են հանձնարարությունը սկսելիս, մինչդեռ մյուսները դժվարանում են ավարտել մի հանձնարարությունը և սկսել մեկ ուրիշը:

- Պարբերաբար հիշեցրեք հանձնարարությունների, դասացուցակի, ժամկետների, դպրոցի այլ կանոնների մասին, փոփոխությունների դեպքում հրավիրեք նրա ուշադրությունը:
- Թու՛յլ տվեք, որ աշակերտը սպառի իր ֆիզիկական ակտիվությունը, օրինակ դասի ժամանակ որոշ հանձնարարություններ կարող է կանգնած կատարել կամ ընդմիջումներ անել:
- Հանձնարարություն տալիս բացատրեք գործողությունները քայլ առ քայլ և հետևեք, որ դրանք կատարի: Ցուցումները տվե՛ք և՛ բանավոր, և՛ գրավոր: Շատ երեխաներ ավելի լավ են կատարում, երբ նույն հանձնարարության քայլերը անում են որպես առանձին հանձնարարություն:
- Թու՛յլ տվեք, որբ աշակերտը համակարգչով աշխատի:

  Ցածր դասարանի երեխաներին կրթելիս ուսուցիչը կիրառում է հետևյալ մեթոդները

- Տարվա սկզբում ուսուցիչը ներկայացնում է ուսուցման գործընթացը:

  Սկսում է դրական կողմերից ներկայացնել ուսումնական տարին, համեմատում է այն մի ճանապարհորդության հետ, որ միասին են անցնելու: Այնուհետև, երբ երեխաները սկսում են հարցեր տալ, պատասխանում է նրանց հարցերին՝ ներկայացնելով դպրոցը:
- Տալիս է բոլորին մի հեշտ հանձնարարություն, որպեսզի և՛ ուժեղ, և՛ թույլ աշակերտները կարողանան հաղթահարել այն, օրինակ՝ «պատմեք ձեր մասին»:
- Միասին շրջան են կազմում, խաղեր են խաղում, հեքիաթներ են կարդում բարձրաձայն, հանելուկներ լուծում: Հաղթողները ստանում են պարգևներ:
- Դասասենյակում ուշադրության հետ խնդիրներ ունեցող աշակերտին կարելի է տեղավորել նորմալ զարգացած այլ աշակերտի կողքին՝ ուշադրությունը հրահանգների նկատմամբ զարգացնելու և ուրիշ երեխաների հետ խմբային աշխատանք կատարելու համար:
- Զարգացնել գունապատկերումը

Ուսուցիչը օգտագործում է գունավոր թղթապանակների համակարգը, որպեսզի օգնի աշակերտին՝ զարգացնելու կազմակերպչական ձիրքը։

Անհատական աշխատանքի համար կարմիր թղթապանակ, ուսուցչի հետ աշխատանքում՝ կապույտ։ Ուսուցիչը կարող է նաև ընդգծել կամ կարճ ներկայացնել իր հրահանգները առանձին թղթի վրա։ Այստեղ հիմնական շեշտը դրվում է ստեղծագործ աշխատանքի վրա։

- Զարգացնել ուսուցման ձիրքը։

Ուսուցիչներից մեկը թույլ է տալիս աշակերտին օգտագործել իրենանհրաժեշտ ժամանակը դասը ավարտին հասցնելու համար։

Ընդհանուր և հատուկ կրթության դպրոցի ուսուցիչներն ավելի շատ կարող են օգնել աշակերտին՝ հնարավորություն տալով պատմելու իր յուրացրած նյութը մեկ այլ հասակակից աշակերտի սահմանված ժամանակից ավելի երկար ժամանակահատվածում։ ԴԱ զարգացնում է նրա ուսուցման ձիրքը։ [2]

Ըստ վիճակագրության՝ այսօր «ուշադրության պակասի ախտանիշ» հիպերակտիվությամբ երեխաները կազմում են դպրոցական տարիքի բնակչության մոտ 3-5 %-ը։

2005 թ-ի սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը։

Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայաստանում։ Սակայն մինչ այդ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունից 5 տարի պահանջվեց Երևանի 5 դպրոցներում այն իրականացնելու և որպես հաջողված փորձ ՀՀ կառավարությանը ներկայացնելու համար։

Սա ոչ միայն նշանակում է, որ, այս կրթական ձևերը իրավական հիմք ստացան, այլև որ դա կառավարելու է պետությունը՝ իր վրա վերցնելով նաև համակարգի ֆինանսավորումը։ Յուրաքանչյուր աշակերտին տրվող բազային գումարը կրթական հատուկ կարիքներով երեխաների համար դպրոցը ստանում է բարձրացված չափաբաժնով՝ լրացուցիչ ծառայությունների համար։

Ներառական կրթության ֆինանսական կառավարումը

1. «Ներառական կրթություն» ծրագրի բյուջեն հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թիվը, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին, հաշվի առնելով փաստացի կոմպլեկտավորումը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$= \frac{2 \cdot {}_{01} + {}_{09}}{3}$$

-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող փաստացի սովորողների միջին տարեկան թիվն է, $_{01}$-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող փաստացի սովորողների թիվն է հունվարի 1-ի, իսկ $_{09}$-ը՝ սեպտեմբերի 5-ի դրությամբ:

2. Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթությունն իրականացվում է ֆինանսավորման տարբերակված չափաքանակով:

3. Ըստ ենթակայության, համաձայն կրթության կառավարման պետական, ինչպես նաև տարածքային կառավարման լիազորված մարմնի և ուսումնական հաստատության միջև կնքված պայմանագրի, ուսումնական հաստատության համար նախատեսվում է ֆինանսավորման ենթակա գումարի չափը: Այնուհետև, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 20-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 37-րդ կետի (ժգ) ենթակետի, ուսումնական հաստատության տնօրենը կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք, ուսումնական հաստատության խորհրդի առաջարկությամբ, ներկայացնում պետական լիազորված մարմնի հաստատմանը:

Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության յուրաքանչյուր տարվա ծախսերը հաշվարկվում են՝

1. Աշխատավարձի ֆոնդի հաշվարկման համար հիմք ընդունելով նախորդ տարում տվյալ դպրոցի համար հաստատված ծախսերի նախահաշվով ձևավորված սովորող (ուսուցիչ և սովորող) ոչ ուսուցիչ հարաբերակցությունների և աշխատողների միջին ամսական աշխատավարձերի չափերը, և ելնելով տվյալ տարվա բյուջեի հաշվարկի հիմքում դրված վերոհիշյալ ցուցանիշներից նույն համամասնությամբ փոփոխվում են նաև դպրոցի համապատասխան ցուցանիշները և հաշվարկվում են աշխատավարձի գծով ծախսերը։
2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվում են այլ ծախսերը։
3. Մնացած ծախսային հոդվածներով հաշվարկը կատարվում է մեկ սովորողի՝ տվյալ հոդվածի համար բյուջեի հաշվարկի հիմքում դրված գումարի չափով։

Ներառական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկման կտրուկ աճ են գրանցել հատկապես Երևանի մի շարք դպրոցներ։ Ենթադրում ենք, որ վերջինիս թեկուզ որպես դրական երևույթ՝ առավելապես պայմանավորված է ոչ թե այդ երեխաներին մատուցվող կրթական ծառայությունների որակի կտրուկ բարձրացմամբ, այլ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար հատկացվող ֆինանսավորման բարձր չափաբաժնով (տե՛ս աղյուսակը)։ Սակայն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2012 թ-ի գնահատումներով մտավոր հետամնացություն ունեցող երեխաների, հենաշարժողական և լսողական հաշմանդամություն ունեցող երեխաների համապատասխանաբար 27 % և 26 %-ը դպրոց հիմնականում չեն հաճախում [8]։

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մեկ սովորողի ֆինանսավորման չափը 2014 թ ֆինանսական տարում, այդ կարիքը չունեցող սովորողին հատկացվածի համեմատ գերազանցում է մոտ 5 անգամ։ Ֆինանսավորման նման դիվերսիֆիկացիան այժմ ներառական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկման գլխավոր խթանն է, որի հիմնական մասը ծառայում է այդ դպրոցներում այս սովորողների հետ

Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների ներառական կրթության ֆինանսավորման դինամիկան (2007-2010թթ)

թթ.	2007		2008		2009		2010	
հ/դպր.	աշակերտների թիվը	ֆինանսավորման չափը (հազ. դրամ)	աշակերտների թիվը	ֆինանսավորման չափը (հազ. դրամ)	աշակերտների թիվը	ֆինանսավորման չափը (հազ. դրամ)	աշակերտների թիվը	ֆինանսավորման չափը (հազ. դրամ)
6	-	-	7	2449[illegible]7	22	10803[illegible]4	34	16517[illegible]6
11	-	-	4	1897[illegible]8	11	5401[illegible]7	17	8293[illegible]8
17	35	13550[illegible]0	36	15865[illegible]9	35	17187[illegible]3	38	18710[illegible]7
20	6	1159[illegible]8	10	3451[illegible]8	17	8348[illegible]1	15	7243[illegible]9
21			5	2046[illegible]8	15	7366[illegible]0	10	5245[illegible]2
27	45	17705[illegible]1	46	20524[illegible]8	47	23080[illegible]1	44	21697[illegible]0
43			12	4107[illegible]9	37	18169[illegible]4	40	20151[illegible]1
59	32	12815[illegible]1	37	15601[illegible]5	40	19642[illegible]6	24	11803[illegible]0
62	-	-	6	2280[illegible]9	19	9330[illegible]2	27	13955[illegible]1
65	-	-	2	1044[illegible]6	6	2946[illegible]4	25	12353[illegible]3
82	-	-	-	-	-	-	6	2916[illegible]2
83			2	1044[illegible]6	7	3437[illegible]5	9	4444[illegible]4
84	-	-	-	-	-	-	17	8270[illegible]5
95	-	-	-	-	-	-	7	3394[illegible]5
100	32	12815[illegible]1	42	16228[illegible]8	48	23571[illegible]1	51	25414[illegible]0
114	22	3626[illegible]8	22	9817[illegible]9	22	10803[illegible]4	25	13998[illegible]5
125	-	-	-	-	-	-	21	10206[illegible]8
127	-	-	5	2676[illegible]3	15	7366[illegible]0	38	18640[illegible]7
129	-	-	3	1255[illegible]3	9	4419[illegible]6	23	11303[illegible]4
135	-	-	10	4019[illegible]7	30	14732[illegible]0	52	25546[illegible]4
150	41	16728[illegible]6	50	22197[illegible]2	53	26026[illegible]5	56	27412[illegible]7
160	-	-	-	-	-	-	19	9203[illegible]6
162	-	-	-	-	-	-	25	12400[illegible]0
168	-	-	-	-	-	-	15	7636[illegible]5
170			6	2300[illegible]6	17	8348[illegible]1	26	12714[illegible]8
180	6	1159[illegible]8	7	2943[illegible]3	8	3928[illegible]5	9	4467[illegible]7
186	-	-	6	2300[illegible]6	17	8348[illegible]1	20	9868[illegible]6
196	-	-	-	-	-	-	2	979[illegible]9
200	30	4729[illegible]6	32	13563[illegible]8	35	17187[illegible]3	38	19538[illegible]5
Մխ.Սեբ. կ/հ	69	21679.0	76	31364.4	85	40715.4	91	41896.1

աշխատող բազմամասնագիտական թիմի աշխատավարձի ֆոնդի ձևավորմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար սննդի կազմակերպման և տրանսպորտային ծախսերի կատարմանը: Սակայն

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երկու տասնյակից ավելի սովորողներով համալրված դպրոցների բյուջետային նախահաշիվներում նկատելի են համապատասխան ծախսերի ոչ ռացիոնալ կատարման միտումները:

Միաժամանակ, ներառական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սննդի կազմակերպումը մյուս երեխաների, նրանց ծնողների շրջանում արժանանում է խիստ բացասական վերաբերմունքի, որովհետև ներառական դպրոցների մեծ մասը մյուս երեխաների համար դեռևս սանիտարական, ֆինանսական, իրավական մի շարք պատճառներով դպրոցի բոլոր սովորողների համար սնունդ չի կազմակերպում, իսկ տրանսպորտային ծախսերը արդարացված են միայն դպրոցի սպասարկման տարածքից դուրս ապրող երեխաների համար:

Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ներկայիս մեխանիզմը, որոշակիորեն սահմանափակում է այս ծրագրի իրականացման մասսայականացումը, միաժամանակ, հանգեցնելով այս ուղղությամբ հատկացված պետական միջոցների ոչ ռացիոնալ օգտագործմանը:

Ներառական կրթություն իրականացնող ցանկացած դպրոցի համար ակնհայտ է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների քանակը չի կարող անսահմանափակ ավելանալ, որովհետև դա միանշանակ կհանգեցնի այդ երեխաներին մատուցվող կրթական ծառայությունների որակի անկման: Ներառական կրթության համատարած կազմակերպման դեպքում առանձին ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կուտակում տեղի չի ունենա: Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտի համար առաջնային խնդիր է ներառական կրթության համատարած իրականացումը, որի արդյունքում մեր հանրապետության հանրակրթական համակարգը առավել կմոտենա պետական կառավարման այս ոլորտի համար տարբեր փաստաթղթերով հռչակված միջազգային չափանիշներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ծնող-երեխա-ընդհանուր և հատուկ կրթության դպրոցի ուսուցիչների միության ճիշտ և համահունչ աշխատանքը կարող է դրականորեն ազդել հիպերակտիվ երեխաների զարգացման և ձևավորման վրա, և ինտեգրել նրանց հասարակություն:

Թիմային մոտեցումը արդյունավետ և դրական միջոց է հիպերակտիվ և ՈՒՊԱՀ երեխաների վարքագիծը կառավարելու, նրանց պահանջները հասկանալու համար և կոնստրուկտիվ քայլեր կատարելով կարելի է՝ բարելավել նրանց կյանքի հասարակական և ակադեմիական հաջողությունները:

Ներառական կրթության կազմակերպման տարիների փորձը ցույց է տալիս, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպումը կարելի է իրականացնել ոչ միայն առանձին հանրակրթական ուսումնական հաստատություններում, այլև դպրոցների ցանցի միջոցով առանձին տարածաշրջաններում, մարզերում և վերջապես ամբողջ հանրապետությունում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. American Psychiatric Association, Diagnostic and Statistical Manual of Mental Discorfers (DSM-IV), 1994.
2. Inclusive education: a practical guide to supporting diversity in the classroom Հեղինակներ: Tim Loreman, Joanne Deppeler, David Harvey: Հրատարակիչ Routledge, 2005
3. Sahley, Billie Jay. Control Hyiperactivy ADD. Naturally, Pain and Stress Publications, 1999.
4. Weintraub, Skype. Natural Treatments for ADD and Hyiperactivy, Woodland Publishing, 1997.
5. Հայաստանի Հանրապետության Օրենքը
6. Ներառական կրթություն իրականացնող Հանրակրթական Ուսումնական Հաստատություն, Տնօրենի Ուղեցույց, Երևան, 2009
7. https://www.aravot.am/
8. ՀՀ կառավարության 01.27.2011թ., N46-Ն որոշում:
9. Ուսուցում վավերագրական ֆիլմերի միջոցով: